



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

04 ապրիլի 2019 թվականի թիվ 36-Ա

ք. Երևան

#### «ԱՆՆԱ ԵՎ ԿԱՐԵՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2019 թվականի փետրվարի 27-ին հարուցված թիվ 4 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով 2019 թվականի փետրվարի 27-ին «ԱՆՆԱ ԵՎ ԿԱՐԵՆ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Ընկերության կողմից 2018 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև 31-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակված եթերի ձայնագրությունները չներկայացնելու հիմքով:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Ընկերությունը 2019 թվականի մարտի 13-ի թիվ 003 գրությամբ ներկայացրել է իր պարզաբանումը և հայտնել, որ 2018 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև 31-ն ընկած ժամանակահատվածի եթերի ձայնագրություն չի կարող ներկայացնել, քանի որ Ընկերությունը 2018 թվականի դեկտեմբեր ամսին եթեր չի հեռարձակել:

Ընկերությունը ստանալով հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզիան, դրանով իսկ ստանձնում է պարտավորություն՝ ապահովելու հեռուստահաղորդումների հեռարձակում: Ընկերությունը առանց որևէ հիմնավոր պատճառի 24 ժամ շարունակ չի ապահովել հեռուստահաղորդումների հեռարձակումը՝ դրանով իսկ խախտելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 61-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը:

Օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովն իրավասու է սույն օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված հիմքի առկայության պարագայում դիմել դատարան՝ լիցենզիայի գործողության դադարեցման պահանջով, ինչպես նաև խախտում թույլ տված հեռուստառադիոընկերությանը (հեռուստաընկերությանը կամ ռադիոընկերությանը) Հայաստանի Հանրապետության

օրենսդրությանը համապատասխան այլ պատասխանատվության ենթարկելու պահանջով:

Ընկերությունը 2019 թվականի մարտի 25-ին դիմում է ներկայացրել Հանձնաժողով և խնդրել դադարեցնել Ընկերությանը տրված լիցենզիայի գործողությունը:

Օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը դադարեցվում է, եթե՝

8) այդ մասին կա լիցենզավորված անձի դիմումը:

Օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված հիմքով լիցենզիայի գործողությունը դադարեցվում է Հանձնաժողովի որոշմամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝

բ) օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 61-րդ հոդվածի 4-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետով սահմանված դրույթներով և հիմք ընդունելով Ընկերության 2019 թվականի մարտի 25-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. Կարճել «ԱՆՆԱ ԵՎ ԿԱՐԵՆ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 4 վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԱՆՆԱ ԵՎ ԿԱՐԵՆ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

04 ապրիլի 2019թ.

ք. Երևան